

Հաստատված է՝

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

26.04.2019 թ. № 14 նիստի որոշմամբ

ԵՊԼՀ ղեկավար, գիտական խորհրդի նախագահ՝

Կ. Վ. Հարությունյան



ՊԱՇՏՊԱԿՆԵՐ

**ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԲԱՆՔԵՐ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ
ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ**

1. «Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԼՀ) «Բանբեր» գիտական պարբերականում (այսուհետ՝ «Բանբեր») հեղինակի կողմից դիմումը, հրատարակման ներկայացված գիտական հոդվածը (այսուհետ՝ Հոդված) և մասնագիտական գրախոսությունը հավաքագրվում են «Բանբերի» գլխավոր խմբագրի (այսուհետ՝ Խմբագիր) կողմից՝ այդ նյութերի հանձման համար հայտարարությունում սահմանված են ժամկետում:
2. Հրատարակման ներկայացված Հոդվածը տրվում է «Բանբերի» հերթական համարի պատասխանատու խմբագրին, ով պարտադիր ստանում է դրա մասին խմբագրական կազմի համապատասխան մասնագետի գրավոր կարծիքը՝
3. Սկզբնական փուլում հոդվածները ներկայացվում են տպագիր՝ խմբագրական աշխատանքների համար: Այնուհետև հեղինակները խմբագրական ուղղումները կատարում և հոդվածը հանձնում են տպագրության՝ էլեկտրոնային ուղղված տարբերակով (Microsoft Word.doc ֆորմատով):
4. Հոդվածի պարտադիր հատվածներն են՝ արդիականություն և նպատակ, խնդրի հիմնավորում, առաջարկվող մեթոդի կիրառում, հետազոտության արդյունքներ, եզրակացություններ և հղումների ցանկ: Տվյալ բաժինները վերնագրեր չեն պահանջում, թեպետ անհրաժեշտության դեպքում հոդվածը բաժանվում է առանձին բաժինների՝ համապատասխան ենթագլուխներով:

5. Հողվածին ներկայացվող տեխնիկական պահանջներն են՝

- Հողվածը պետք է ներկայացվի doc ֆորմատով:
- Հողվածի ծավալը՝ ոչ պակաս, քան 0.5 և ոչ ավել քան 1,0 մամուլ, նվազագույնը 8, առավելագույնը 16 էջ:
- Էջի չափերը՝ 16x23.5:
- Էջի լուսանցքները՝ վերև 2 սմ, ներքև՝ 2,5 սմ, ձախ՝ 2 սմ, աջ՝ 2 սմ /առանց ոճական ձևավորումների/:
- Պարբերության սկիզբը՝ 1սմ լուսանքից աջ:
- Տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 10, միջտողային տարածությունը՝ 1,0:
- Բոլոր էջերը պետք է համարակալված լինեն:
- Տեքստում չպետք է լինեն կրկնակի բացատներ և տողադարձեր:
- Աղյուսակները ներկայացվում են Word ֆորմատով:
- Բոլոր նկարները պետք է լինեն հստակ՝ 300 dpi tif կամ jpg ֆորմատով:
- Հողվածում գլխատառերով և թավ նշվում է՝

- **ՀՏԴ** /վերևի ձախ անկյունում/:

- **Հեղինակի անուն, ազգանուն, հայրանուն** (ամբողջական):

- **Հեղինակի մասին տեղեկություններ**՝ գիտական աստիճանը, գիտական կոչումը, ամբիոնը, ֆակուլտետը, զբաղեցրած պաշտոնը, կազմակերպության լրիվ անվանումը, էլ.հասցեն կամ հեռախոսի համարը:

- **Հողվածի վերնագիր** (կենտրոնում, մեծատառերով): Վերնագիրը չպետք է ծավալուն լինի, պետք է արտացոլի հողվածի բովանդակությունը և համապատասխանի հանդեսի ընդհանուր ուղղվածությունը:

- **Ամփոփում**: Ոչ ծավալուն շարադրանք՝ 100-150 բառ: Ամփոփման մեջ նշվում է հողվածի գլխավոր թեման և ներկայացվում աշխատանքի ընդհանուր բնութագիրը:

- **Հիմնաբառեր**: Առանձին տողով ներկայացվում են հողվածում կիրառվող հիմնաբառերը, բառակապակցությունները (ոչ ավել քան 10 բառ և բառակապակցություն՝ իրարից ստորակետով անջատված): Այս տողում նախադասություններ չեն թույլատրվում:

Հողվածները կարող են ներկայացվել հայերեն, ռուսերեն, անգլերեն, առանձին դեպքերում՝ այլ լեզվով: Այն պետք է ունենա մյուս երկու լեզուներով ամփոփում և հիմնաբառեր, ինչպես նաև տվյալ լեզուներով թարգմանված տեղեկատվություն, որը ներառում է՝

- Հեղինակի անուն, ազգանուն, հայրանունը,
- Հեղինակի մասին տեղեկությունները,
- Հողվածի վերնագիրը:

Հաջորդիվ գրվում է հոդվածի հիմնական տեքստը: Հոդվածի վերջում պարտադիր նշվում է օգտագործված գրականության ցանկը, իսկ տեքստում՝ այդ ցանկի հղումները:

Օգտագործված աղբյուրները և գրականությունը նշվում են մեկ ընդհանուր ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ-ում՝ այբբենական կարգով: Սկզբում նշվում է հոդվածի լեզվով օգտագործված գրականությունը: Գրականության ցանկում առկա հայերեն և ռուսերեն աղբյուրները պարտադիր ներկայացվում են նաև տառադարձամբ (տես՝ **translit.net**):

Տեքստում (հեղինակի հղումները դրվում են փակագծերի մեջ՝ նշելով հեղինակի ազգանունը, հրատարակության թիվը, հղման էջը/երը/՝

(Բաղիկյան 1986:18)

Հղումների ցանկը ներկայացվում է հոդվածի վերջում՝ 11 տառաչափով, բառերի միջև հեռավորությունը՝ 1.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները (կառուցվածքային վերլուծություն), Ե., 1986, 215 էջ:

Հղման մեջ թույլատրվում է կրճատել երկար վերնագրերը, բաց թողնված բառերի փոխարեն տեղադրելով բազմակետեր՝ դրանցից առաջ և հետո դնելով բացատ՝ տեքստում (Քոսյան... 1980:176)

Գրականության ցանկում՝ Քոսյան Վ., Դարձվածաբանություն (Ջահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Հայոց լեզու, 1-ին մաս, պրակ Ա), «Լույս» հրատ., Ե., 1980, 199 էջ):

Եթե մեջբերումը կատարվում է մի քանի աղբյուրից, դրանք իրարից բաժանվում են կետ ստորակետով՝
Տեքստում՝ (Բաղիկյան 1986; Քոսյան, 1980:176):

Եթե տեքստը մեջբերվում է ոչ սկզբնաղբյուրից, ապա հղման սկզբում կիրառվում է «ըստ» բառը, օր.՝ (հղումը՝ ըստ Բաղիկյանի, էջ 15): Եթե տեքստը մեջբերում չէ, այլ որևէ մեկի տեսակետների, մտքերի, գաղափարների հիշատակում և կրկին մեջբերված է ոչ սկզբնաղբյուրից, ապա գրվում է «Ըստ», (օրինակ՝ ըստ Բաղիկյանի):

Տեքստում կարելի է օգտագործել ներտեքստային մեջբերումներ ամսաթերթից և օրաթերթից (ոչ գիտական) օրինակների համար: Նրանք ներկայացվում են կլոր փակագծերում՝ նշելով անվանումը, տպագրության տարեթիվը, համարը կամ ամսաթիվը, և գրականության ցանկում չեն ներառվում:

Հիմնական տեքստի նշումները ներկայացվում են ծանոթագրություններում: Տեքստում ծանոթագրությունների հղման նշանը դրվում է կետադրական նշանից առաջ /բացառությամբ «!», «?» և «...»/:

Տեքստում կարող են օգտագործվել տեքստի ընդգծման գործիքներ /հիմնական միտքը, եզրակացությունը, կարևոր եզրույթները և այլն ընդգծելու համար/՝ շեղատառ, թավ տառեր, ընդգծում:

Օգտագործվում են ընդհանուր հապավումներ, կարելի է օգտագործել անհատական հապավումներ, սակայն անպայման ներկայացնելով դրանց վերծանումը (հապավումների ցանկում հոդվածի վերջում կամ տեքստի մեջ փակագծերում): Ոչ համընդհանուր կիրառության հապավումները առաջին անգամ կիրառելիս հարկ է ներկայացնել դրանց ամբողջական անվանումը:

Դարը գրվում է հռոմեական թվանշաններով: Թվերը մինչև 10-ը գրվում են տառերով, իսկ հաջորդները՝ արաբական թվանշաններով, օրինակ՝ երկու խումբ, 25 հրապարակում:

Բառերի միջև տարածությունը չպետք է լինի ավելին, քան մեկ բացատը: Ցանկացած կետադրության դեպքում բացատ չպետք է լինի՝ բացառությամբ փակագծերի (բայց ներսում առանց բացատի) և գծիկի՝ թվերի միջև (100-150 բառույթ), իսկ բառերի միջև դրվող գծիկը կիրառվում է առանց բացատի:

Հոդվածը ներկայացնելիս հարկ է հիշել, որ հեղինակը պատասխանատվություն է կրում փաստերի ճշգրտության, աղբյուրներից մեջբերումների և հղումների համար: Եթե մեջբերումները վերցված են օտար աղբյուրներից, պարունակում են տեսական գիտելիքներ, ապա դրանք պետք է թարգմանել (փակագծերում նշելով, թե ում թարգմանությունն է): Մեջբերումները պետք է վերցնել չակերտների մեջ (« »-հայերենի համար և " "-անգլերենի և ռուսերենի համար): Եթե մեջբերվող հատվածը բազմահատոր գրքից է, հղման մեջ նշվում է նաև հատորը, մասը, էջը և այլն:

Հոդվածի բովանդակությունը ստուգված, ուղղագրական, ոճական և այլ սխալները ուղղված պետք է լինեն հեղինակի կողմից, իսկ տեքստը պետք է ձևավորված լինի գիտական ոճին համապատասխան: Տեքստը պետք է շարադրված լինի գրական լեզվով /առանց ժարգոնային և խոսակցական արտահայտությունների, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք ուսումնասիրության առարկա են/: